ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳՕՏՈՒ ՏԱԳՆԱՊՆԵՐԸ

Շարունակում է աւազակային յարձակումների ու սադրանքների օջախ մնալ Հայաստանի սահմանամերձ գօտին: Այս տարածքներում ազերիների ու խորհրդային զօրքերի պահուածքը շատ յաճախ նոյնանում է Արցախում կիրառած գործողութիւնների լկտի բնոյթի հետ: Չդադարող յարձակումներն ու աւարառութիւնը ոչ միայն մըշտական նեարդային մթնոլորտ են ստեղծում մարդկանց մօտ, այլեւ խափանում են գիւղատնտեսական աշխատանքների ընթացքը: Սադրանքների թիրախում են յատկապէս Իջեւանի, Գորիսի, Կապանի, Սիսիանի շրջանները:

Տեղի է ունենում ռազմական տեխնիկայի եւ զինուորական անձնակազմի տեղաշարժեր:

Վերջին շրջանում հայկական կողմը ուժեղացրել է սահմանի պաշտպանութիւնը, ինչի շնորհիւ հնարաւոր է դարձել դիմագրաւել եւ հակահարուած տալ ազերիական խժդժութիւններին, նուազեցնելով հնարաւոր կորուստների չափը: